


ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան դին և Պոլսոյ հմր. 8 ՄՆՃ.
• Գաւառաց • 10 ՄՆՃ.
վեցամս. • և Պոլսոյ • 4 ՄՆՃ.
• Գաւառաց • 5 ՄՆՃ.
Օտար երկիրներու • 30 Պր.
Դրանուցման տուրը մէկ անգամի հա-
մար 3 դուրուշ, երկու անգամի հա-
մար 2 դրշ և անգամներու
համար զատ սակարկութիւն կըլ-
այ :
Խրաքանչիւր թիւ 2 դրշոց թուղթ .



ԼՐԱԳԻՐ

ՀԱՆԱՊԱԶՕՐԵԱՅ

ՊԱՅՄԱՆՔ

Դուրս գնացած լրագրաց ճանրու
ծախքը խորագրութեան վրայ է :
Լրագրոյ վերաբերեալ նամակ
կամ որ և իցէ գրութիւն խորագրի
— Տնօրէնին պիտի ուղղուի : Դաւա-
թիւս Սանտրքճըլար ճառատէսի թիւ
198, Նօրօ խան, Մասիսի գրասեն-
եակը :
Ճանրու ծախքը չիճարուած նա-
մակ չընդունուիր :
Չտպուած նամակ, յօդուած, եւ
եւ չեն տրուիր :

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 2 ՅՈՒՆԻՍԹ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Աղբային մամոյն յառաջիմու-
թեան փափաքող ուսումնասէր աղ-
բայնոց յորդորանք յանձն առինք
վերջապէս լրագրիս ամենօրեայ ընել-
հանդերձ հարկ եղած հնարաւոր կա-
տարեւադործութեամբ, որոց հա-
մար ջանք և զոհողութիւնը չսխա-
խանային մեր կողմէ, փաստ լինե-
լով յառաջիմասէր աղբայնոց քա-
ջայերական համակրութեան վրայ :

Մեր սկզբունքը թէպէտ մեր 27
տարուան անցեալէն յայտնի է, բայց
դարուս յառաջիմութեան հետ ըս-
կըզբանց և դադարեաց ալ յառաջ-
դիմութիւնն ինչպէս նաև վիճակաց և
պարագայից փոփոխութիւնքն և պի-
տոյք՝ բնականաբար մեր մտաց և ըզ-
դացմանց վրայ ալ ներդրածելով, մեր
խմբագրական պաշտօնին կանոն և
ուղեցոյց պիտի լինին : Ըսել կուղենք
թէ մեր նշանաբանը պիտի լինի ա-
զատութիւն և յառաջդիմութիւն, եր-
կու վսեմակրօնքը, որք աղբաց եր-
ջանկութեան հիմունքն են :

Մոյն նշանաբանին կամ սկզբանց
համեմատ՝ ջերմաբար պիտի պաշտ-
պանենք և քաջալերենք ինչ որ օգ-
տակար և նպաստաւոր է մեր աղբին
ազատութեան, անդորրութեան, մը-
տաւոր բարոյական և նիւթական
դարդացման, իսկ հակադարձաբար
պիտի դատապարտենք ու հարուա-
ծենք ինչ որ հակառակ կամ վրնա-
նասաբեր է այդ բազմաթիւ պայմանաց :

Աւելորդ է ըսել թէ լրագրոյս
ուղղեալ յօդուածք նամակք և այլ
ամեն գրութիւնք սոյն սկզբամբք ներ-
շնչեալ պէտք է լինին . հետևաբար
կը ծանուցանենք ամեն յառաջդիմա-
սէր Հայ գրչաց որ 'ի և Պոլսի և 'ի
գաւառս, թէ իրենց առ մեզ ուղ-
ղած աղբօգուտ յօդուածներն ու նա-
մակներն յօժարաւորով պիտի ընդուն-
ւին ու հրատարակուին Մասիսի մէջ :

Այս նպատակաւ լրագրոյս գա-
ւառական թղթակցաց թիւն աւել-
ցընելու համար գաւառական հոգա-
բարձուաց ցանկն ընդարձակած ենք,
ինչպէս որ լրագրոյս վերջին երեսը կը
տեսնուի, և ասոր համար հրաւեր կը
կարդանք Աղբիւնուպօլիս, Պոլսա,
Տրապիզոն, Սամսուն, Սմաթիա, Սե-
բասթիա, Եւփոկիս, Խորբերդ, Վան,

Մուշ, Եգեհիս, Մարաշ և այլ կա-
րևոր քաղաքաց մէջ գտնուող ուսում-
նական և ուսումնասէր աղբայնոց,
որ եթէ յօժարին վերադառնալ հիմնա-
դրին համոժայն լրագրոյս հոգա-
բարձու կամ թղթակցի լինելու հա-
մար, գոհութեամբ կընդունինք . մի-
այն թէ, գրուելիք յօդուածք նա-
մակք և այլք՝ մաքուր աշխարհաբա-
ղեղուով խմբագրուած լինին, առանց
աւելորդաբանութեանց, կարելի ե-
ղածին չափ ամփոփ և բարեկրթու-
թեան պահանջած պայմաններով, այ-
սինքն առանց անձնական պատուոյ
դպրելիք նախատեալն ակնարկու-
թեանց, մի միայն ճշմարտութիւնը,
արդարութիւնն ու հասարակաց օ-
գուտը կէտ նպատակի բռնելով :

Գալով լրագրոյս պարունակելիք
նիւթոց, հարկ չկայ ըսելու թէ ա-
մենօրեայ լինելուն պատճառաւ քա-
ղաքական և ներքին լրոց աւելի ըն-
դարձակութեան հետ՝ աղբային լու-
րերն, ինչպէս նաև առևտրական և
գրական տեղեկութիւնք աւելի ըն-
դարձակ և աւելի կանոնաւոր հըրա-
տարակութիւն պիտի գտնեն :

Եւ որպէս զի թերթիս իւր նոր վի-
ճակին մէջ կարենայ ամենուն գիւ-
րամատչելի լինիլ, ներկայ դնոյն վը-
րայ յաւելուած չափով ընենք թուր-
քիոյ բաժանորդաց և ձեռքէ զնորաց
համար . այլ միայն օտար երկիրներու
բաժանորդութեանց համար՝ փոխա-
նակ 2 Օսմ լիւրայի՝ 50 Քրանք գին ո-
րոշած ենք՝ բաղձայի գնոյն մարտը
դրամով յաւելուածին մասամբ փոխա-
րինութիւն մը լինելու համար :

Ահա ասոնք են այն պայմաններն՝
որովք լրագիրս ամենօրեայ լինելու
նոր թուականը կ'ողջունէ : Իսկ մեր
հաստատապէս մտադիր ենք որ այս
նոր վիճակիս մէջ, ամեն յառաջդի-
մասէր աղբայնոց գոհութեանն ու
համակրութեանն արժանի ընելու ջա-
նանք զայն . և եթէ, ինչպէս կը յու-
սանք, փոխադարձաբար քաջալերու-
թիւն ընդունինք, քիչ ժամանակէն
աւելի ընդարձակելով ու կատարեալ-
գործելով կարենանք իրապէս առա-
ջին Հայալիզու լրագիրն ընել, որուն
իրաւամբ պէտք ունի մեր աղբն, և
որ մեր ամենէն մեծ փառասիրու-
թիւնն է :

ՔԱՂԱՔԱԿԱՆ

1878-79

Ա.

Տարի մ'ես անցաւ, ի մեծամեծ
և կարեւոր դէպքերով, որք պատմու-
թեան մէջ նշանաւոր տեղ մը պիտի
բռնեն : Անցեալ տարւոյն սկիզբը տա-
կաւին պատերազմը չէր վերջացած .
սակայն իւր վերջին շրջանին մէջ մը-
տած էր : Ռուսաց յաղթանակներն
ոչ ևս իրենց առջև դիմադրութիւն
կը թողուին, և գրեթէ արձակ հա-
մարձակ դէպ 'ի և Պոլսի կարչաւէին
նոր տարիէն քանի մ'օր առաջ Կուր-
քօ զօրավարը Սօֆիայի վրայ քայած
և զայն գրաւած էր, մինչդեռ Միւս-
թի և Արաբկէֆ Տրոյեան կիրճէն Պա-
քաններն անցնելով՝ Գըզանլըքն ա-
ռին : Ռատեցքի զօրավարն Սվէթի
նիւթովի բարձունքը կեցած էր, և
Շիբկայի Օսմանեան բանակն երեք
կողմէն պաշարուելով ապարդիւն դի-
մադրութենէ մ'ետե զինամիտ եղաւ
Ռուսք սաստիկ ձմերուան մէջ տա-
րին այս յաղթութիւններն, որք ի-
րենց զօրավարներուն քանի մ'ամիս
առաջ նոսմացեալ համարը նորէն
փայլեցուցին, և Ռուսական զօրաց
յամառ քաջութիւնը միանգամ ևս՝
ցոյց տուին : Օսմանեան զօրքը քաջա-
բար պատերազմեցաւ, սակայն բաղ-
դըն իրեն նպաստաւոր չեղաւ . զին-
ւորական գործողութեանց մէջ ալ
չատ սխալներ գործուեցան, որոց հա-
մար Սիւլէյման փաշայ և ուրիշ զօ-
րավարներ դատաւարանի երկմարկե-
ցան պատերազմական ատենի մ'առ-
ջեւ : Արտահանը տուող Գասապ Հիւ-
սէյին փաշան և ուրիշ օմանք արդէն
դատապարտութիւն կրեցին . բայց
Սիւլէյման փաշային դատաւիճիւրդե-
պաշտօնապէս չհրատարակեցաւ :

Ռուսաց անգլիմադրելի յառաջխա-
ղացման պատճառաւ, Բ. Դուռը Նի-
քօյա Մեծ—Դըսին բանակակերտն
հաշտութեան առաջարկութիւններ
յղեց, զորս Ռուսք գաղտնի լու-
թեամբ մ'ընդունեցին, և իրենց յա-
ռաջխաղացումը շարունակեցին դէպ
'ի ֆիլիպէ և Աղբիւնուպօլիս :
1878 յունիս 5/17ին Անգլիական
խորհրդարանը բացուելով, թագու-
հին իւր ատենախօսութեան մէջ կը-
սէր որ եթէ «թշնամութիւնք դժ-
բաղդաբար երկարաձգին, անակնկալ
դէպք մը կրնայ պարտաւորել Նոբին
վեհալառութիւնը նախագիշու-
թեան միջոցներ ձեռք առնելու :
Այս ազդարարութիւն մ'էր յաղթու-
ղին իւր պահանջումները չափաւորե-
լու : Բայց Ռուսք դէպ 'ի Կէլիպօլու
և վոսիլիոյ ներդուցները կը յառաջա-
նային, և կըսուէր թէ վեհ. Սուլթա-
նըն ու իւր նախարարը Գրուսա պի-

տի մեկնին : Անգլիա ներդուցներուն
ազատութիւնն, և Կ. Պոլսոյ մէջ ա-
պահովութիւնը պահպանելու համար
հրամայեց որ իւր նաւատորմը Դար-
դանէն ներս մտնէ : Բայց առաջին
անգամ նաւատորմն ետ դարձաւ կըր-
կին Պէշկեպի ծովախորշը : Յունիս 16/28ին
Անգլիական կառավարու-
թիւնը խորհրդարանէն 6 միլիոն իրա-
պահանջեց ծովային ու ցամաքային
զօրութիւններն աւելցնելու համար,
որպէս զի երբ Եւրոպական վեհաժո-
ղով մը գումարի, Անգլիա իւր ձայնը
լսելի ընել տայ : Խորհրդարանին մէջ
սաստիկ ընդդիմութիւն եղաւ նախա-
րարաց առաջարկութեան, բայց վեր-
ջապէս մեծամասնութեամբ ընդուն-
ւեցաւ :

Գըզանլըքի մէջ բանակցութիւնք
սկսելով՝ հաշտութեան հիմունքը կըն-
քուեցան և հրատարակեցան, բայց
ասոնք խիստ մութ էին և Ռուսք միշտ
կը յառաջանային, թէ և Բարձր. Սաֆ-
վէթ փաշա, որ այն ատեն արտաքին
գործոց նախարար էր, Օսմանեան լի-
ազօր երեսփոխան կարգուելով Պէր-
լինի դեսպան Սասաուլլահ Կէլի հետ,
նորա դաշուստէն առաջ Աղբիւնու-
պօլիս գնացած էր հաշտութեան դաշ-
նադրութիւնը կնքելու : Ռուսաց այս
յառաջխաղացման պատճառաւ Անգ-
լիական նաւատորմը նորէն հրաման
առաւ Դարդանէլի ներդուցն անցնելով
Մարմարա մանդելու, և թէպէտ Դար-
դանէլի բերդին Օսմանեան հրամա-
նատարը բողբեց, բայց Հօյնպի նա-
ւապետը միտ չդնելով ներդուցն ան-
ցաւ և մինչև մայրաքաղաքիս կղզի-
ներուն առջև եկաւ :

Իսկ Ռուսք զինադադարի պայմա-
նաց համեմատ զանալճայի գլծելը
դրաւելէ ետե՝ մինչև Այսթեֆանօս
եկան, ուր Նիքօյա Մեծ դուքսն
իւր բանակակերտը հաստատեց :
Այնկէ ետե հաշտութեան բանակցու-
թիւնն Այսթեֆանօսի մէջ կատար-
ուեցաւ, մէկ կողմէն Բարձր. Սաֆ-
վէթ փաշայի և Սասաուլլահ Կէլի,
իսկ միւս կողմէն Կոմս Իկնամիտի
և Պ. Նէլիտօֆի միջև, որք իրադօր
երեսփոխան կարգուած էին : Հաշ-
տութեան դաշնագրին բանակցու-
թիւնները գումարութեամբ յառաջ
կերթային, բայց վերջապէս վստա-
19 (մարտի 3) ին կնքուեցան, և Նի-
քօյա Մեծ դուքսն այն փոթորկալից
օրը զօրահանդէս մը հրամայած լի-
նելով Չարին գահակալութեան տա-
րեդարձին առթիւ, իրիկուան մօտ
կրցաւ իւր սպայակոյտով հանդերձ
Ռուսական զօրաց ներկայանալ և ա-
ւետել թէ հաշտութեան դաշնագի-
րն ստորագրուած է :

Այսթեֆանօսի դաշնագրութեան
գլխաւոր պայմաններն յայտնի են .
Ռուսիա իւր գլխաւոր նպատակին կը
հասնէր, այն է Թուրքիոյ Միսիսի

ստիպան նախագիշակ համար հին պատահա Պ. ար լակովի Կ. Պոլսոյ դեռ պահանջանքն ընդ համար հիւստիստան անհանգստ:

Օտեւայէն կը դրեն թէ Ռուսա-կան կառավարութիւնն երեսն շա-գհեան. վարձու բռներ է՝ Արեւելեան Բումբիլի մէջ զանաւոր Ռուսական զորքը Ռուսիա փոխադրելու համար:

Պարկաղի մէջ երեք Ռուս սպայք մեռած ըլլալով, մանրակողք քննու-թեամբ հասկցուեր է թէ յիշեալ դրժ-բաղդ սպայք խաղի մէջ շատ ստակ կորուսած է վճարելու անկարող զըտ-նուած ըլլալով, խաղարանին դուրս ելնելուն պէս երեքն ալ ինքզինքնին սպաններ են:

Սթամբուլ քաղքին մէջ ալ կը կար-գանք թէ թուլայի մէջ Պուրջալեհին երեք Բումբիլի սպայ է մէկ յիսնապետ սպաններ են:

Ճիւղբէի մէջ ծագած ապստամբու-թիւնը զարկելու պաշտօն ունեցող խղ-զէթ փաշայէն եկած հեռագիր մը կը ծանուցանէ թէ Պէտրիան փաշայի որդիներէն Հիւսէյին պէյ ձերբակալ-ւեր է Օսման պէյ ալ հնազանդու-թիւն յայտնելու նպատակաւ ճանաչ-ելեր է հեռագրաւ այն կողմերը խա-ղաղութիւն հաստատուեր է:

Կ. Պոլսոյ քաղաքապետութեան անտուկէն եղած դորութեանց վրայ նորանոր յայտնութիւններ կը լինին, հեռագրաւ գործը մեծ կարեւորու-թիւն ստանալով, քննութեանց շա-րունակութեան համար յատուկ մաս-նաժողով մը կազմուած է, որուն կը նախագահէ Պետական խորհրդոյ դա-տական ճիւղին անդամներէն Պոխոր Էֆէնտի:

Վաղըթ կը ծանուցանէ թէ Կիրի-տի նախորդ կուսակալ Գոթթաքի Ա-տաօկէս վաշան Աթէնքի Օսմանեան դեպարտմէն պիտի անուանի՝ ֆոթիատէս փաշային տեղի որ ինչպէս յայտնի է՝ Կիրիտի կուսակալ անուանած է:

Չինու որդաբութեան պատճառաւ վարնայի Հայ և Յոյն բնակչաց մէջ ծագած յուզումը ծանուցած ենք նախընթաց թուով: Վերջին տեղեկու-թիւնք կը ծանուցանեն թէ տեղա-կան իշխանութիւնը ղինուորական խորհուրդ մը գումարելով, քանի մը միջոցներ անօրինակ է, որոց մէջ է պարտաւորել բոլոր այն ընտանեաց հայերէն որոց զաւակները ղինուորա-կան ծառայութիւնէ ազատ մնալու համար վաճառելէն հետեցած կամ յատկապէս դուրս դրուած են, ի-րենց տուններուն մէջ երկերկու ղին-ուոր ընդունել, որոց բնակութիւն և անունը ստիչ զատ, պարտաւոր պի-տի լինին միանդամայն օրն երկու ֆրանք տալ անոնց՝ մինչև որ իրենց բացակայ որդիք տեղական կառա-վարութեան ներկայացնեն ի ղինուո-րադրութիւն:

Վաղըթի Յոյն ժողովուրդը Կ. Պոլսոյ յունաց Պատրիարքին աղեր-սաղարթ մը ղրկելով՝ նորա պաշտպա-նութիւնը կը խնդրէ ղինուորադրու-թեանէ ազատ մնալու համար:

Պաթու մի նահանգին սահմաննե-րն որոշելու պաշտօն ունեցող Թուր-քոս-ուսական յանձնաժողովն Օս-մանեան անդամներն ճշհապ պէյ և Վէքիլ Էֆէնտի, որք Միքայէլ մեծ գուրին հրաւիրանաց համեմատ Տփլիսի գնացած էին ձմեռն անցու-նելու, այս անգամ Բ. Գրան կողմէ

Կ. Պոլսոյ կողմէն և յառաջիկայ գարնան նորէն Պաթու մի պիտի եր-թան:

Կ. Պոլսոյ քաղաքապետութեան մէկ աղդը հրաւէր կը կարգ ալ հառա-րակութեան որ քաղաքապետութեան պաշտօնէից ծանուցանեն այն անվա-ւաններն՝ որք 100ին 88ն աւելի փոշի ունեցող կամ աւելով ու քա-րով խառն անուի վաճառեն: Յան-ցա որ անվաճառութեան քաղ օրինաց պիտի պատժուին:

Ճերխուէի Հալիստիս քաղքը զար-մանալի ըլլալով կուսոյ: Խաղիկոյ Մոնարք քաղաքին մէջ խաղաղ նա-խորդ վարձակալ վախճանեալ Պ. Պը-լանի որդի Պ. Պըլան, որ 60 միլիոն ֆը-րանքի ժառանգութեան մը տիրացած է, այժմ Կ. Պոլսոյ կը գտնուի եղեր, և քաղաքին բնակչաց բարեք մը ընե-լու փափաքելով, ինքզինքն 1300 ինչեցեղ յանձն կառնու եղեր, եթէ կայսերական կառավարութիւն իրեն արտօնութիւն տալ խաղարաններ հաս-տատուել բերաւ, Վաղըթիս, կողմնէն և Պէօլլիս քաղքէն: Պ. Պըլան իւր ծը-րագիրն անցուցաւ ուրախութ օր Բ. Գրան ներկայացուցեր է:

Սար կըսեն չարիքը չարիքով դար-մանել:

Չարը Ռուսիէն անուն Անդրկոստի պատանի մը, որ Անդրկոստի Պէրու-թիւնէն մէջ իւր ուսմանը կը շարու-նակէր, քանի մը շարաթ առաջ չը գիտցուի ինչ նպատակաւ իրիկուն մը վարժարանէն կեղնէ և այլ ևս չը վերադառնար: Իւր դասատուներն ու ընկերները կասկածելով խուզար-կութեան կը ձեռնարկեն, գժբաղդ պատանին խեղդուած կը գտնուի վարժարանին մօտ ծովափին վրայ: Այս ոճրին հեղինակները գեռ-գանուած չեն:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ	
ԷՕՆԱՄԸ ՈՒՄՈՒՄԻՆ	
Կիրակի իրիկուն գոցուեցաւ	42,16
Այս առաւօտ բացուեցաւ	42,25
Կէս օրին	42,25
Բուռլի երկաթուղի	Քր. 44
Թղթագրամ	Լր. 448

Ա.Զ.Գ.Ա.ՅԻՆ.

Անցեալ ուրբաթ օրն Աղդային ժողով գումարեցաւ ի Վաղըթիս ընդ-առ ժամանակեայնապագահութեամբ պարտիարքական խորհրդական Գեր-Տ. Խորէն սրբազանի և ատենապե-տութեամբ Վսեմ: Ստեփան փաշայի Արդանեան:

Վերջին նիստին աստեղծութեան վաւերացումն յետոյ, ժողովը քանի մը երեսփոխանական ընտրութեանց վաւերացման ձեռնարկեց:

Միտա Չերաղ Էֆէնտի թէպէտ Եւդակիոյ դատաւէն երեսփոխան ըն-տրուած էր, բայց կանոնական տա-րիքը չունենալուն պատճառաւ հը-րաժարական զրկած էր:

Վսեմ Յ. Նուրեան, թողէտ Թէրխանեան և Յակոբ Գաղաղեան Էֆէնտիներն և Խորհրդի դատա-ւէն ընտրուած Տէմիթեան Գեորգ Էֆէնտի հրաժարական զրկած ըլլա-լով, ժողովն ընդունեց այս հրաժա-րականներն:

Արդեւեկեան Մարկոս Էֆէնտի ալ թէպէտ վսեմն երեսփոխան ընտ-րուած էր, բայց ընտրութիւնը փո-խանակ Գաւառական Բնդ-Տ. ժողովէն կատարուելու՝ տեղեյն խառն ժողո-վէն կատարուած լինելով անվաւեր ղատուեցաւ:

Միտա քան խառնուր և Մար-կոսեան Գրիգոր Էֆէնտիք, որ երեք անգամ բացակայ գտնուած էին և վերջին հրաւիրալ չէին պա-տաստանած, երեսփոխանութեանէ հրաժարեալ նիստու եցան:

Վերջապէս ընտրուած Գաղաղե-ան Միկայիլ, Երբարդեան Պոլոս և Նորեկեան Միկայիլ Էֆէնտիներուն ընտրութիւնն օրինաւոր դատուելով վաւերացաւ:

Յետոյ Վաղըթի թաղեցւոյ կող-մանէ խնդրագիր մը կարդացուելով նախաձեռնութեան գիււանին զըրկ-ուեցաւ ի նախաքննութիւն:

Այս նախաձեռնութեան դիւա-նէն եկած երեք տեղեկագիրք կար-դացուեցան, որոց մէջ ժողովին ներ-քին կանոնադրութեան և միւսն ալ Սահմանադրութեան վերաբնութեա-նը նկատմամբ անցեալ տարի Վսեմ: Ստեփան փաշայի բրած առաջարկու-թեանց կը վերաբերէին: Նախաձեռ-նութեան դիւանին տեղեկագիրք Ն. Վսեմութեան առաջարկած կանոնադ-րական 7 յաւելումներն և Սահմա-նադրութեան վերաբնութիւնն այս տարւան համար փակելու առա-ջարկութիւնն ընդունելու երրորդացու-թիւն ստեղծ լինելով, ժողովն հա-ւանութիւն տուաւ:

Նախաձեռնութեան դիւանին եր-րորդ տեղեկագիրքն ալ երեսփոխան Պէկիան Էֆէնտիի պատճառաւանեալ հրաժարագրին առաջարկութիւնները մի առ մի հերքելով՝ հրաժարականը չընդունել, ղինքն ի ժողով հրաւիրել և եթէ մերժէ՝ երեսփոխանական ա-թուին անարժան հրաժարակից կա-ռաջարկէր: Այս առաջարկութիւնն ալ ընդունուեցաւ:

Այն դործողութիւններէն ետեւ Ս. Պատրիարք հօր հրաժարման խնդրին վրայ երեսփոխանաց ատարագրու-թեամբ հարցում մը ներկայացաւ:

Հարցման հեղինակները, «Երազ-րաց մէջ տեսնուած հրատարակու-թիւններէ տեղեկանալով թէ Ս. Պատ-րիարք Հայաստանի դատաւոյ մէջ հանապազօր պատահած հարստահա-րութեան և աղանջ բարձման համար ստեղծ իւր առաջարկած միջոցներուն ցարդ անդործադրելի մնալուն պատ-ճառաւ Բ. Գրան հրաժարական մնա-տուցեր է եղեր, կը հարցնէին թէ Ն. Սրբազանութեան հրաժարման խնդիրն ստոյգ է է, և եթէ ստոյգ է, թէ՛ այդ խնդիրն և թէ՛ աղդը տեղի տը-ւող պատճառներն ինչ պղծինք ու-նեցած են:»

Ըստ սրբաժ խորհրդական որբա-ղանն և վարձութեաններկայ անդամը այս մասին պաշտօնապէս տեղեկու-թիւն չունէին, և Ս. Պատրիարք հօր կողմանէ ալ Աղդային ժողովը հըրա-ժարագիր գեռ մատուցուած չէր, գիւանն յայտարարեց թէ Ն. Սրբազ-նութիւնն աղդին առջև հրաժարեալ չէր, այլ միշտ աղդին սիրելի Պատրի-արքն էր:

Այնուհետեւ ժողովն օրոտարդին անցաւ, որ է աղդային Պիւսթէի խըն-դիրը, բայց երեսփոխանք ցրուի ըս-կըսելով, այն խնդրին վրայ վիճա-բանութիւնը չկրցաւ յառաջ տար-ւել, և աստեանը գոցուեցաւ երեք շարաթէն՝ այսինքն յունվար 19 ին գումարուելու որոշմամբ:

Սրբապառիկ Կեօփիւն դիւղէն և-րէկ ի Պատրիարքարան և առ նոյն դիւղայիս եկած հեռագիր մը կը ծա-նուցանէ թէ հաշակաւոր Միհր Ալի անուն (չէրքէղ կամ քիւրտ) առաջա-կապեալին ձիւտորներն յիշեալ դիւղը մէկ ժամ հրացանի բռնելով՝ ութ հո-գի վիրաւորեր և Վուսկիանոս անուն

անձ մ'սպաններ են: Կուսակալն հարկ եղած միջոցները ձեռք առ երէ, բայց գեռ չարադործները ձեռք անցած չեն: Չայս ծանուցանելով՝ յիշեալ գիւղացիք՝ օգնութիւն կը խնդրեն:

Այն հեռագրին վրայ մայրաքա-ղաքին պանդուխտ Սրբապառիկնե-րէն 500 չափ աղդայինք Պատրիար-քարան գիւղացին, և նոյն միջոցին Գաղ-ղիոյ Վսեմ: Գեղապետ Պատրիարքա-րանը գտնուելով՝ մեկնած աստեան յիշ-եալ հեռագիրը Ն. Վսեմութեան ներ-կայացուցին: Այսօր ալ Բ. Գրան եր-թալու և Մեծ-Եղարքարին աղերսա-գիր մատուցանելու պատրաստու-ած են:

Ինչպէս որ հինգշաբթի առա-թով ծանուցուած էր, Յիսուսի վանահայր Եփրեմայոս եպիսկոպոսն ստորիկանութեան բանտէն հանուելով՝ նոյն իրիկունը Պատրիարքարանի պաշ-պանութեան յանձնուեցաւ դատաւ-տանը տեսնուելու պայմանաւ:

Կիրիկիոյ Ս. Կաթողիկոսն յունվ-1 թուով հետեւեալ հեռագիրն հա-սած է ի Պատրիարքարան.

«Զէյթուն մատաչէլքի թաշգի-զաթատ իրէն դայմադալն սեպէ-պլեյթ մէրմէպի իլէ եէնի վուգուաթ-լար դուհուր իմ միջ: Խաւսը նաղհա-թա առեմ թային օրումնաւ: Թէք-րարէն սուրբ սեպէ օրումնադատ: Բէմի բարօրթ օրարտան մուֆասալ աղետայալ իրախիլ:»

Գաղղիոյ Վսեմ: Գեղապետն երէկ իւր առաջին թարգմանին հետ տա-րեղիւն չնորհաւորութեան համար Ս. Պատրիարքին այցելութեան եկաւ և մեծ պատուով ընդունուեցաւ:

Ն. Վսեմութիւնը կէս ժամու չափ տեսակցեցաւ, և առ Հայոց աղդ-ունեցած մասնաւոր սէքն ու համակ-րութիւնն այս անգամ ևս յայտնե-լով Մեծ-Եղարքարանն ստացած խոտա-մանը վրայ յայտնեց թէ Հայաստանի վիճակը քննելու և բարեկարգու-թիւն գործադրելու պաշտօնով խա-ռըն յանձնաժողով մը պիտի ղրկուի Հայաստան:

Ոստիկանութեան դուռը բան-տարկեալ երկու Ուրնեյի հայոց հա-մար ալ յանձնարարեց իւր թարգմա-նին որ (այսօր) նոյա աղետով թիւը ձեռք բերէ:

ՀՈՄ. ԴՊՐՈՑ ԱՄԵՐԻԿԵՆ

Իւսկիւտարու Սէլմանը թաղը բա-ւական տարիներէ ի վեր աղջկանց համար հաստատուած այս ծանօթ գաղթին դատաւութիւնները նորէն պիտի սկսին 1879 յունվարի 9 թին, երեքշաբթի օր:

Գաղթին լեզուն անգլիարէն է:

Տղայոց բարեւոր դատարանիւ-թեան յարդը ճանչցող Հայք կը հը-րաւերուին աւալ իւրեանց աղջիկ դա-ւակներն այս դպրոցը, ուր աղջկանց թէ՛ ուսման և թէ՛ բարոյականին և առողջութեանը հարկաւոր խնամք կը ատրուին:

Գաղթին ուսման ընթացքին, ըս-տակ վճարելու պայմանաժամաց, և գաղթին վերաբերեալ ուրիշ կարեւոր բաներու վրայ տեղեկութիւն տրուած է մասնաւոր յայտարարութեամբ, որմէ օրինակ առնել ուղղորդող կը-նան գիւմել Հոմ դպրոցը, և կամ Պայպլ — Հաուզ կոչուած Ամերիկեան խանք Կ. Պոլսոյ ֆինանսները վրայ:

Գաղթին այցելութիւն ընել փա-փաքող անձինք կը հրաւիրուին դալ հոն երբ որ կուղեն, բայց ի կերակ-օրէ:

ՏՈՐՈՒՄՈՐ ՄԻՐՏԻՉ ԱՆՆԱՆՆԵՐ

Երկար տարիներէ ՚ի վեր կուրծքի սրտի և թոքախտի հիւանդութիւնները իրեն մասնեցեալ ընտրած և մեծ փորձառութիւն ունեցած ըլլալով յայտնաւորեալ և սոցա բժշկութիւնը կատարելագործել, հիմնովին բուժելով նոյն իսկ երկրորդ կարգի խրատագոյն աստիճանները :

Այս առթիւ պատիւ ունի ծանուցանել արգոյ հաստատութեան՝ որ պատրաստ է մասնաւոր այցելութիւններ ընել հիւանդացի և ամեն օր ընդունել իրեն դիմող հիւանդները մինչև կէս օր իւր բնակարանը ՚ի Գառը գիւղ Մեծհիւրտար ճամոտէսի թիւ 45, ուր չորեքշաբթի օրերն ալ ձրի պիտի նայի :

Հինգշաբթի օրերը պիտի գտնուի Մ. Բէյնեմի իւր գաւառը գեղաւորանը, և Պոլիս Սուլթան Համամիոյ :

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

ՄԻՆԱՍ ԶԵՐԱԶ

Թիւ ԻՆՉ ՇՈՒՆԵՐԱՅԻ ՊԵՐԼՈՒՆԻ ՎԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Հայ պատուիրակութեան քարտուղար—Ժորժէան Պ. Մինաս Զերազը ի սոյն հեղինակութեան առաջին տպագրութիւնն սպառած լինելով, երկրորդը հրատարակուած է յաւելւածով մը :

Ամեն Հայ գրաւորանաց քով կը գտնուի : Գին 75 սանթիմ :

ԴԱՄԱՐԱՆ

ԶԵՐԱԶ—ՏԵՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ

Ինչպէս անունն արդէն կը յայտնէ, այս մատենին երկու երկրասարդ հեղինակներուն զրաժ գաւառականներուն հաւաքածոյն է, որ կը գրուի իւր իւր Հայ գրաւորանաց քով : Գին 5 զր 10 թղթագրամ :

ԲԱՆԱԼԻ

ՀԱՅԵՐԷՆ ՇԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ

Գրեց Մ. Մամուրեան

Ահա անիկ գեղեցիկ մեթոտ մը, որ Մամուրեան էֆենտի լալաւաւ սիրութեամբ մուտ գտնելով մայրենի լեզուին ուսման մէջ, կառավարողէ աշակերտները շարադիր լինելու, չըստպանելով որ անոնք քերականութեան սաղաթիւը չընթանան անցին :

Այս գրքիցը Զմիւռնիոյ Տէմեան եղբայրաց տպարանէն ՚ի լոյս ընծայուելով, կը ծախուի Եֆենտի Զմիւռնի իւր թիւ 2, Ս. Ղուկաս երես գրատունը և ուրիշ գրաւորանաց քով : Գին 50 սանթիմ :

ԿԻՅԼՕՄ ԹԷԼԼ

ՈՂԵՐԳՈՒԹԻՒՆ Ի ՀԵՆԳ ԱՐԱՐՍ

Թարգմանեաց Գաղղիերէնէ

Մ. Ա. Կիւլապեան

Անգամ քարտուղարաց դիւանին արտաքին գործոց պաշտօնատան որ ՚ի Բ. Գուան

Շիլլէր Գերմանացի հռչակաւոր հեղինակին ընտիր գործերէն մին և զոյ սոյն ողբերգութիւնը մէկ հինգնոց թղթագրամի կը վաճառուի վ. Բ. Մարգարեանի գրատունը Մեծան շարը թիւ 37 և ամեն գրաւորանաց քով :

ՊԱՏՄԱՌՈՒԹԻՒՆ

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ

Ի պէտս աշխարհի վարձարանաց

Երեստացի

Ի տպարանի Սրբոյ Յակովբեանց

Ամեն Հայ գրաւորանաց քով կը գտնուի, Գին 7 զր :

ԽՄԲԱԴԻՐ—ՏՆՕՐԷՆ

Կ. Ս. ԻԿԻՒՆԻՃԵԱՆ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԱՍԻՍ ԻՐԱԳՐՈՅ ԶԱԼԱԹԱ ՆՕՐՈ ԽԱՆ



ՇԻՐՔԵԹԻ ԽԱՅՐԻԷԻ

ՇՈՂԵՆԱԿՆԵՐՈՒՆ ԵՐԹԵԼԵԿԻ ԺԱՄԵՐԸ

1878 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1 ՈՒՐԱԹ ՕՐԷՆ ՍԿՍԵԱԼ

ՄԻՆԱՍ ԴԵԿՏԵՄԲԵՐ 31

ԲՈՒՓՈՐԷՆ ԻՋՆՈՂ ՇՈՂԵՆԱԿՆԵՐԸ

Ժ-Բ-Ե-Թ-Ի	ԽԱՅՐԻԷԻ	Թ-
2 13	Եֆենտի Վեդարու. Պէյլիքաճէ, Թարապիւս, 23	
3	Եֆենտի. Վեդարու. Պէյլիքաճէ, Թարապիւս, 32	
3 13	Եֆենտի. Վեդարու. Պէյլիքաճէ, Թարապիւս, 32	
4 30	Եֆենտի Վեդարու. Պէյլիքաճէ, Թարապիւս, 183	
5 30	Եֆենտի Վեդարու. Պէյլիքաճէ, Թարապիւս, 23	
6 30	Եֆենտի Վեդարու. Պէյլիքաճէ, Թարապիւս, 2	
8	Եֆենտի Վեդարու. Պէյլիքաճէ, Թարապիւս, 32	
10	Եֆենտի Վեդարու. Պէյլիքաճէ, Թարապիւս, 22	

ԱՐԷՆԻՆԻ ԳԵՂԵՆ

2 30	Արեւմտեան Գեղեցիկ. Օրթաք. Պէյլիքաճէ, 20
3	Արեւմտեան Գեղեցիկ. Օրթաք. Պէյլիքաճէ, 23
3 30	Արեւմտեան Գեղեցիկ. Օրթաք. Պէյլիքաճէ, 22
4 13	Արեւմտեան Գեղեցիկ. Օրթաք. Պէյլիքաճէ, 20
5	Արեւմտեան Գեղեցիկ. Օրթաք. Պէյլիքաճէ, 22
11	Արեւմտեան Գեղեցիկ. Օրթաք. Պէյլիքաճէ, 20

ԱՐԷՆԻՆԻ ԳԵՂԵՆ

2 13	Արեւմտեան Գեղեցիկ. Օրթաք. Պէյլիքաճէ, 21
2 13	Արեւմտեան Գեղեցիկ. Օրթաք. Պէյլիքաճէ, 2
2 43	Արեւմտեան Գեղեցիկ. Օրթաք. Պէյլիքաճէ, 28
4	Արեւմտեան Գեղեցիկ. Օրթաք. Պէյլիքաճէ, 34



ՋՐՀԱՆ



ԿԱՐԻ ԳՈՐԾԻՔ

Փորը անանիւս կոչուած ձեռքով գործող ու անքակ կար կարող գործերը ամեն տեսակ կար մեծ զիւ :

5 30	Արեւմտեան Գեղեցիկ. Օրթաք. Պէյլիքաճէ, 21
8 45	Արեւմտեան Գեղեցիկ. Օրթաք. Պէյլիքաճէ, 25

ԿԱՄՈՒՐԱԿՆ ԵՆՆՈՂ ՇՈՂԵՆԱԿՆԵՐԸ

Խ-Բ-Ե-Թ-Ի ԽԱՅՐԻԷԻ

3	Գաւառ. Պէյլիք. Օրթաք. Պէյլիքաճէ, 2
4	Արեւմտեան Գեղեցիկ. Օրթաք. Պէյլիքաճէ, 23
5 30	Արեւմտեան Գեղեցիկ. Օրթաք. Պէյլիքաճէ, 32
6 30	Արեւմտեան Գեղեցիկ. Օրթաք. Պէյլիքաճէ, 25
8	Արեւմտեան Գեղեցիկ. Օրթաք. Պէյլիքաճէ, 22
9 30	Արեւմտեան Գեղեցիկ. Օրթաք. Պէյլիքաճէ, 23
10 15	Արեւմտեան Գեղեցիկ. Օրթաք. Պէյլիքաճէ, 33
10 40	Արեւմտեան Գեղեցիկ. Օրթաք. Պէյլիքաճէ, 18
11 15	Արեւմտեան Գեղեցիկ. Օրթաք. Պէյլիքաճէ, 32

ԱՐԷՆԻՆԻ ԳԵՂԵՆ

3 15	Արեւմտեան Գեղեցիկ. Օրթաք. Պէյլիքաճէ, 20
3 43	Արեւմտեան Գեղեցիկ. Օրթաք. Պէյլիքաճէ, 20
10 15	Արեւմտեան Գեղեցիկ. Օրթաք. Պէյլիքաճէ, 2
11 40	Արեւմտեան Գեղեցիկ. Օրթաք. Պէյլիքաճէ, 20
12	Արեւմտեան Գեղեցիկ. Օրթաք. Պէյլիքաճէ, 25

ԱՐԷՆԻՆԻ ԳԵՂԵՆ

4	Արեւմտեան Գեղեցիկ. Օրթաք. Պէյլիքաճէ, 21
9 43	Արեւմտեան Գեղեցիկ. Օրթաք. Պէյլիքաճէ, 34
10 30	Արեւմտեան Գեղեցիկ. Օրթաք. Պէյլիքաճէ, 28
11 40	Արեւմտեան Գեղեցիկ. Օրթաք. Պէյլիքաճէ, 21
11 40	Արեւմտեան Գեղեցիկ. Օրթաք. Պէյլիքաճէ, 22

Լրագիրս ամեն օր կը հրատարակուի բաց ՚ի կիրակի և տօն օրերէ :

Բաժանորդագրութեան տեղի է Ղալաթիա Սանտրոգըրար ճամոտէսի թիւ 193, Նորո խան Մասիսի խաղաղատունը : Իսկ գաւառացի մէջ հետեւեալ հազար թարգմանաց գրատեսակները :

- ՉՄԻՒՆԻՒՄ. Ստեփան էֆ. Տէմեան.
- ՆԵՒՈՒՄԻՒՄ. Խորոյ » Եֆենտի.
- ՊՐՈՒՍՍ. Ստեփան էֆ. Թանկէրեան.
- ՈՒՍՈՒՄ. Արթ. Տ. Արիստակէս աւագ քահանայ Ֆեյլեան.
- ԱՐԲԱՆՈՒՄ. ՍԱՄԱՐԷՆ. ՏՐԱՊԵՏՈՒՄ. ՍԱՄԱՐԷՆ. ԵԻՂԱՆԻՄ. ԽԱՐԵՐԻՒՄ. ԵՐԶՆԵԱՍ. Թագէտ էֆ. Բաղրատունի.
- ԿԱՐԻՆ. Կարապետ » Զաքարեան.
- ՄՈՒՇ. Միքայէլ » Փօթիկեան.
- ՎԱՆ. ԲԵՐԵՆ. Սեդրակ » Խորաճեան.
- ՏԵՂԵՆԱԿԱՆ. Թորոս էֆ. Փափագեան.
- ԵՂԵՆԱԿԱՆ. Ֆրէճատ աղա Ս. Ֆրէճատեան.
- ՏՓԻՒՄ. Պ. Նիկողայոս Տ. Ղալաթեան.
- ԿԱԼԿԱՆ. Պապարտ աղա Հիւրման :